ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԴԱՏԱԽԱՂ-ՄՐՑՈՒՅԹԻ ՀԱՂԹՈՂ ԹԻՄԸ ՍՏԱՑԵԼ Է ՀՀ ՓԱՍՏԱԲԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՈՒՄ ԶԵՂՉՈՎ ՍՈՎՈՐԵԼՈՒ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ

24.10.2019 17:50

Հայաստանում ֆրանսիական համալսարանում տեղի է ունեցել դատախաղ-մրցույթ ֆրանկոֆոն ուսանողների միջև մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ:

Դատախաղ-մրցույթին մասնակցել են 13 ուսանողներ՝ բաշխված 5 թիմերում: Նրանք ֆրանսերեն լեզվով ներկայացրել են իրենց ելույթները «Փաստաբանի խոսքի ազատություն, թե՞ դատական հեղինակության պաշտպանություն» թեմայով:

Բոլոր մասնակիցները ֆրանսիական համալսարանի կողմից ստացել են մասնակցության վկայականներ, իսկ հաղթող թիմը և լավագույն բանախոսը՝ ֆրանսիայում պրակտիկա անցնելու հնարավորություն:

Լավագույն արդյունք ցուցաբերած ուսանողներին տրամադրվել է ՀՀ փաստաբանական դպրոցում զեղչով սովորելու հնարավորություն:

Միջոցառումը կազմակերպվել էր Հայաստանում ֆրանսիական համալսարանի, ՀՀ փաստաբանների պալատի, Մոնպելյեի փաստաբանների պալատի, Մոնպելյեի Փաստաբանների պալատի Մարդու իրավունքների ինստիտուտի, Հայաստանի Սենգորի ամբիոնի կողմից:



AVOCATS
UFAR
CONCOURS







Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })